ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-19/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով Մարտկոցների մոդուլի /Ապրանք / ձեռքբերման գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 02.07.2019 ժամը 12.00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/

Ս. Դավթյանը

Անդամներ՝

Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Ռ. Տ. Սահակյանը

Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/՝ Լ. Կաբասակալյանը

Կ. Եսայանը

Հանձնաժողովի քարտուղար՝

Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ Մ. Նիկոլյանը

1. **Ընդունել ի գիտություն.**

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը 27.06.2019 թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտեից /Կոմիտե/ կատարել է հարցում՝ ՆԻԿՕ-ՏԵԿ ՍՊ ընկերության՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

1.2 Գնահատող հանձնաժողովի 27.06.2019 թ. թիվ 3 որոշմամբ, ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով առաջին տեղը զբաղեցրած մասնակցից պահանջվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 02.06.2019 ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը /ամբողջական նկարագիրը/:

2. **Հանձնաժողովն արձանագրեց.**

2.1 Կարգով սահմանված ժամկետում Կոմիտեից 02.06.2019 առաջին տեղը զբաղեցրած մասնակից՝ ՆԻԿՕ-ՏԵԿ ՍՊ ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ստացվել է դրական եզրակացություն **/կցվում է/**:

2.2 ՆԻԿՕ-ՏԵԿ ՍՊԸ-ի կողմից Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ պահանջվող փաստաթղթերը ներկայացվել է էլեկտրոնային եղանակով սահմանված ժամկետում **/կցվում է/**, որում արձանագրվել է հրավերի պահանջների անհամապատասխանություն՝ բացակայում է հրավերով պահանջվող ապրանքի համար նախատեսված արտադրողի կողմից տրված հավաստագրման ձևը (manufacturer's authorization form /MAF/):

3. Հանձնաժողովը որոշեց՝

3.1 Համաձայն Կարգի 47-րդ կետի, նիստը կասեցնել 3 աշխատանքային օրով՝ մինչև 08.07.2019, և մասնակցից պահանջել շտկում՝ սույն արձանագրության 2.2 կետով նշված անհամապատասխանության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0

Նիստը շարունակվել է 09.07.2019 ժամը 16.00-ին

Նիստին ներկա մասնակիցներ՝ ՆԻԿՕ-ՏԵԿ ՍՊԸ տօրեն Մ. Խաչատրյանը
Միկրորինգ ՍՊԸ տնօրեն Ռ. Մալխասյանը

4. Հանձնաժողովն արձանագրեց.

Համաձայն մրցույթի պահանջների՝ ՆԻԿՕ-ՏԵԿ ՍՊ ընկերությունը, որպես առաջին տեղը զբաղեցրած մասնակից ներկայացրել է MAF Schneider Electric (APC) արտադրողի կողմից, որը տրամադրված է H Group LLC-ին՝ Elco Distribution LLC-ի միջոցով:

Բացի այդ, ՆԻԿՕ-ՏԵԿ ՍՊ ընկերությունը ներկայացրել է 05.06.2019 թ. կնքված Մարտկոցների մոդուլների մատակարարման թիվ 01/19 պայմանագիրը, որը կնքված է ԷՅՉ ԳՐՈՒՊ ՍՊ ընկերության հետ: Պայմանագրում կան անճշտություններ /կցվում են/:

Նիստը հրավիրվել է 23.07.2019 ժամը 17.00-ին

Ի գիտություն

Հանձնաժողովի կողմից ապրանքի համար պահանջված MAF փաստաթղթի երրորդ անձանց փոխանցելու իրավունքի մասին APC ընկերությանը կատարված հարցման վերաբերյալ ստացվել է բացասական պատասխան /կցվում է/:

5. Հանձնաժողովը որոշեց՝

5.1 Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել անբավարար, և հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ Մերժել ՆԻԿՕ-ՏԵԿ ՍՊ ընկերությունը հայտը՝ 1 չափաբաժնով: Համաձայն Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի՝ եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0

5.2 Երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից Միկրորինգ ՍՊ ընկերությունից, պահանջել մինչև 29.07.2019 ժամը12.00-ը ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքի անվանումը, տեխնիկական բնութագիրը /ամբողջական նկարագիրը/ և արտադրողի կողմից տրված՝ հրավերով պահանջված MAF փաստաթուղթը

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0

5.3 Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն Կոմիտե կատարել հարցում՝ Միկրորինգ ՍՊ ընկերության՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ /կցվում է/

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0

5.4 Գնահատման նիստը տեղի կունենա Կոմիտեից տեղեկատվություն և սույն արձանագրության 5.3 կետով նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Դավթյան

անդամներ՝ Ռ. Տ. Սահակյան

Լ. Կաբասակալյան

Կ. Եսայան

քարտուղար՝ Մ. Նիկոլյան